ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 3

«ՀՀ ԱՆ ՔԿԾ-ԷԱՃԱՊՁԲ-24/30» ծածկագրով ընթացակարգի գնահատող հանձնաժողովի նիստի

ք. Երևան 22 մարտի 2024թ.

Ժամը 16:00

Մասնակցում էին՝

Նախագահ՝ Տարոն Վարդանյան

Անդամներ՝ Սեդրակ Կիրակոսյան, Հայկ Հովհաննիսյան

Քարտուղար՝ Նելլի Աբովյան

1.Էլեկտրոնային աճուրդի հայտերի ներկայացման և գնման ընթացակարգը կասեցնելու մասին.

1.1 Ընդունել ի գիտություն, որ «ՀՀ ԱՆ ՔԿԾ-ԷԱՃԱՊՁԲ-24/30» ծածկագրով էլեկտրոնային աճուրդը հայտարարվել է 29.01.2024թ.-ին, իսկ հայտերի ներկայացման վերջնաժամկետն է 09.02.2024թ-ին ժամը 12:00-ին, էլեկտրոնային աճուրդը սկսվել է 12.02.2024թ.-ին ժամը 12:00-ին:

1.2 «ՀՀ ԱՆ ՔԿԾ-ԷԱՃԱՊՁԲ-24/30» ծածկագրով գնման ընթացակարգի 1-ին տեղ զբաղեցրած Մասնակցի՝ «ՏՆՄ» ՍՊԸ-ի, կողմից ներկայացված հայտի ապահովումը ներկայացված էր բյուջետային փոխանցման ձևով, որը կատարվել էր «ՆԻԿՕ-ՏԵԿ» ՍՊԸ-ի անունից: Քանի որ նշված անհամապատասխանությունը վերաբերում է հայտի ապահովմանն, ուստի հաշվի առնելով գնահատող հանձնաժողովի կողմից հայտի ապահովումը գնահատելու հանգամանքը, «ՀՀ ԱՆ ՔԿԾ-ԷԱՃԱՊՁԲ-24/30» ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովը որոշում էր կայացրել՝ կասեցնել գնման ընթացակարգը և նշվածի վերաբերյալ պարզաբանում ստանալու համար դիմել ՀՀ ֆինանսների նախարարություն:

2. Էլեկտրոնային աճուրդի 1-ին տեղ զբաղեցրած Մասնակցի հայտում հրավերով պահանջվող /նախատեսված/ փաստաթղթերի գնահատման և դրանցում առկա անհամապատասխանությունները շտկելու մասին.

2.1 ՀՀ ֆինանսների նախարարության կողմից համապատասխան պարզաբանումը՝ N 03/26-1/6005-2024 գրությամբ, ՀՀ ԱՆ քրեակատարողական ծառայությանը ներկայացվել է 22.03.2024թ.-ին: Ըստ ՀՀ ֆինանսների նախարարության կողմից տրված պարզաբանման՝ հայտերի գնահատման և մերժման համար պատասխանատու է գնահատող հանձնաժողովը՝ գնումների մասին ՀՀ օրենսդրությամբ իրեն վերապահված իրավասությունների մասով և «Գնումների մասին» ՀՀ օրենքի 32-րդ հոդվածով սահմանված է, որ հայտի ապահովումը վճարում է մասնակիցը, ինչն ապահովում է հետագայում հայտի ապահովման գումարի գանձման հնարավորությունը:

2.2 «ՏՆՄ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտում առկա անհամապատասխանությունները հետևյալն են.

ա/ «ՏՆՄ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված դիմում-հայտարարությունում հրավերի 4.3 կետի 1-ին մասի ե/ ենթակետով սահմանված N 1.3 հավելվածը՝ իրական շահառուների վերաբերյալ տեղեկություններ պարունակող տեղեկատվությունը, տրված է «ՆԻԿՕ-ՏԵԿ» ՍՊԸ-ի անունից:

բ/ «ՏՆՄ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտի ապահովումը, որը ներկայացված է բյուջետային փոխանցման ձևով՝ կատարվել է «ՆԻԿՕ-ՏԵԿ» ՍՊԸ-ի անունից:

Նշված անհամապատասխանությունների պատճառը հանդիսացել է այն հանգամանքը, որ «ՏՆՄ» ՍՊԸ-ի և «ՆԻԿՕ-ՏԵԿ» ՍՊԸ-ի տնօրենները հանդիսանում է նույն անձը՝ Մասիս Խաչատրյանը:

2.3 Հաշվի առնելով առաջին տեղ զբաղեցրած Մասնակցի՝ «ՏՆՄ» ՍՊԸ-ի, կողմից ներկայացված հայտում առկա անհամապատասխանությունները՝ գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովը որոշեց՝ մեկ աշխատանքային օրով նորից կասեցնել գնման ընթացակարգը և վերոհիշյալ մասնակցին տալ շտկման հնարավորություն, մասնավորապես՝

ա/ շտկել դիմում-հայտարարությունում հրավերի 4.3 կետի 1-ին մասի ե/ ենթակետով սահմանված N 1.3 հավելվածը՝ իրական շահառուների վերաբերյալ տեղեկություններ պարունակող տեղեկատվությունը, որը պետք է լինի «ՏՆՄ» ՍՊԸ-ինը, ինչես նաև կարող է նշվել իրական շահառուների վերաբերյալ տեղեկություններ պարունակող կայք էջի հղումը:
բ/ «ՏՆՄ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտի ապահովումը, որը կատարվել է «ՆԻԿՕ-ՏԵԿ» ՍՊԸ-ի անունից, գնահատող հանձնաժողովի կողմից կարող է ընդունելի լինել, եթե «ՏՆՄ» ՍՊԸ-ի և «ՆԻԿՕ-ՏԵԿ» ՍՊԸ-ի միջև գործում է «ՀՀ ԱՆ ՔԿԾ-ԷԱՃԱՊՁԲ-24/30» ծածկագրով գնման ընթացակարգին մասնակցելու համատեղ գործունեության պայմանագիր:

2.4 Գնման հայտի շտկման համար սահմանված ժամանակահատվածում՝ մեկ աշխատանքային օրվա ընթացքում, Մասնակցի կողմից համապատասխան շտկումն իրականացնելուց հետո, վերջինիս հայտը կգնահատվի բավարար, հակառակ դեպքում Մասնակցի հայտը կգնահատվի անբավարար և կմերժվի:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3, դեմ՝ 0

3. Գնահատող հանձնաժողովի հաջորդ նիստի նշանակման մասին.

3.1 Հանձնաժողովի հաջորդ նիստը հրավիրել շտկման վերջնաժամկետը լրանալուց հետո՝ նույն օրվա ընթացքում:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3, դեմ՝ 0:

Քարտուղար _____ **Ն. Աբովյան**

Հանձնաժողովի նախագահ՝ _____ **Տ. Վարդանյան**

Անդամներ՝ _____ **Ս. Կիրակոսյան**

_____ **Հ. Հովհաննիսյան**